

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին և Պոլսոյ համար 8 ՄԷՃ
Պատուագ 40 ՄԷՃ
Վերականգնող և Պոլսոյ 4 ՄԷՃ
Պատուագ 5 ՄԷՃ
Իւրաքանչիւր թերթի գին 60 վրդ
Հանձնարարող տղը մէկ անգամի հա-
մար 3 զուրուշ, երկու անգամի հա-
մար 2 զուրուշ, աւելի անգամներու
համար զատ սակարկութիւն կը լինայ:



Լ Ր Ա Գ Ի Ր

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 26 ԴԵԿՏԵՄԲԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Փարիզ և յունի

Հօթ—Բրիտանական զուգահեռներու
փոխանակման ընտրութեան մէջ Պո-
նափութեան ընտրութեան առաւելա-
գոյն քուէ ստացաւ, բայց համեմա-
տական քուէարկութեան մնաց:

Մատրիա և յունի

Տոն Ալֆոնս Պարսէլան պիտի հան-
դիպի, և յետոյ վալանի ճանրով
Մատրիա պիտի երթայ, ուր քանի
մ'օր կենայէ ետեւ հիւսիսային բա-
նակին ընդհանուր կեդրոնաւորին
պիտի երթայ ի Լիւրօն:

Սէրրանո մարաշախտ Պայօն հա-
տու:

Վիեննա և յունի

Լէմպէրկ—Չերնովիցի երկաթուղ-
ւոյն նախորդ անօրէն Պ. Օֆէնհէյմի
(որ դրամական նենգութեամբ ամ-
բաստանեալ է) դատաւարանն այսօր
կ'սկսի երդուեալ դատաւարաց առ-
ջն Ամբաստանադրին ընթերցումն
երեք ժամէն աւելի տեւեց:

Վալն հարցաքննութիւնը պիտի
սկսի:

Մատրիա և յունի

Սէսթօի դուքոր, որ Տոն Ալֆոն-
սի թագաւոր հրատարակուելուն հե-
ղինակ կը համարուի, հիւսիսային բա-
նակին դուրս անուանեցաւ: Կը հա-
ւատան թէ Լապէրնա, Պերից և
Տօրէկարէ զօրավարներն իրենց զօ-
րաց հետ նոր թագաւորին հետ մի-
ացեր են:

Լոնտոն և յունի

Օտ—Քոնս. 44 7/8
Փոթ 1865 68 1/2—69
» 1869 56
» 1874 66
» 1872 85 1/2—86
» 1873 52 3/4—53
Նոր փոխառութիւն 1 1/46
Անգլ. քոնս. 92 1/46

Լիւրօն և յունի

Բամազակ Միայինկ—Օրէկան 7 3/4—7/8
» Ֆայր Տօյէրայ 4 7/8 —
Շախտած 15000 հակ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կըսուի թէ թուրքո—Պարսկա-
կան սահմանադրող օրոշման համար
կազմուած յանձնաժողովն իր նիս-
տերն անսահմանաբար յետաձգե-
ր է: Ասոր պատճառն է եղեր, յանձ-
նաժողովին պարսիկ անդամնց՝ աշն
ինդիոյն վրայ անցեալ դարու մէջ
կնքուած դաշնագրութիւնը մեր-
ժեն և վերջին անգամ կարենայ մէջ
կնքուած պայմանագրութիւնը մի-
այն իբրեւ համաձայնութեան վաւե-
րական հիմ ճանչելը, մինչդեռ Օս-
մանեան անդամը՝ հին դաշնագրու-
թեան ալ նկատողութեան տեսնելը

կը պահանջէին: Այս անհամաձայ-
նութիւնն յանձնաժողովը վերջին
ատենագրութեան մէջ արձանագ-
րուեալ է, և կը կարծուի որ խըն-
դիրն երկու միջնորդ տերութեանց
(Ռուսիոյ և Անգլիոյ) պիտի ներկա-
յացուի:

Պէրլիքաթէն եկած վերջին գիրե-
րը կը ծանուցանեն թէ Աստրո-
օղանի զորքը և Սերվիոյ մէջ հաս-
տատուելու վրայ եղող առեւտրական
կարգադրութեան կցորդեալ մաք-
սական սակագներն վրայ անհամա-
ձայնութիւն ծագեալ է Սերվիոյ նոր
նախարարութեան և Աստրո—
օղանի կառավարութեան մէջ: Ես-
կայն յոյս կայ որ այս դժուարու-
թիւններն երկու կողմը գոհացնելու
կերպիւ կրնան լուծուի:

Չինուորական նախարարութեան
նորընտիր տեղապահ Վիսթ—
Ալի Սայիպ փաշան Սպարապետի դրան
առաջին թարգման Մեծ Մամիկոն-
եան Միքայէլ Մուրատ Էֆէնտիի հետ
երկուշաբթի օրն այցելութիւն տը-
ւաւ Ռուսիոյ, Դաղիոյ, Գերմանիոյ և
Աստրիոյ դեսպանաց:

Կոյսերական կառավարութիւնն
իմանալով որ Ռոտտսթոօն նահանգին
Մանտրա և Թիւրպէ—տէրէ գեղե-
րը բնակեալ Չէրքէզ գաղթականաց
գլուխները զինեալ հրոսակաւք մը
կը պատրաստեն Մանտրա գիւղը
բնակեալ Չէրքէզաց վրայ յարձա-
կելու համար, զորս իրենց սարուկը
կը համարին, ասից զատ Գանուբ-
եան գաւառը բնակող ուրիշ Չէր-
քէզ գաղթականաց գլխաւորներուն
հետ գաղտնի թղթակցութիւն կը
նեն որպէս զի զանոնք ալ իրենց հետ
միացնեն, այս գաւառագրութեան ա-
ռաջին առեւտրական հարկ եղած
միջոցները անօրինեւէ ետեւ, հրամա-
նագիր զրկեց գաւառաց կառավա-
րիչներուն որ Չէրքէզ գաղթակա-
նաց վրայ աշարուրջ հսկողութիւն
ընեն:

Փոքր Ասիոյ սովիւրց օգնութեան
կեդրոնական մասնաժողովը մինչև
այսօր 3590 մշակական եղն դնած է
Բուսթիլէն և փոքր Ասիա շրջած:

Այս գումարէն դուրս ին Դա-
նուբի, Խիւտապէնտիկեարի, Այտը-
նի և Էրզրումի գաւառներէն զրկը-
ւածները:

Երեքշաբթի օրը Սամսթիա աշ-
քատ հայադղի մը թրամուսի ճան-
բուն վրայէն անցած ժամանակ ոտքը
սահելով ինկաւ և թրամուսի կառքը
խեղձին վրայէն անցնելով գլուխը
ջանջաւորեց:

Շրտարայի վառօդարանին բը-
ռնիւրուն և դործած աւերմանց
աղետալի միասուց վրայ, զորս հե-
ռագիրն համառօտիւ ծանուցած էր,
հետեւեալ տեղեկութիւնները կու-
տայ Սերվիոյի զաման լրագրը:

« Դեկտ. 8/20ին առաւօտուն քա-
ղաքը թանձր խուարով ծածկուե-
ցաւ, և շատ չանցած՝ ջրհեղեղեան
անձրև մը տեղալ սկսաւ զարհուրե-
լի որոտմամբ և փայլատակմամբ:
Միանգամայն բուռն երկրաշարժ մ'
եղնելով երկիրը դողդիլ սկսաւ:

« Նոյն անհրատաքնաւ միջոցին
բերդին կից վառօդարանաց միոյն
վրայ կայծակ ինչալով վառօդ բռն-
կեցաւ, և վառօդարանն ու բեր-
դին մէջ գտնուած բոլոր շէնքերն
օդն ելան. քանի մը վայրկեան ետ-
քէն ալ վառօդարանին բլուրը վրա-
ստորոտը գտնուած թաղաքահանէ թա-
ղին վրայ, և եօթանասուն տուն փը-
լատակներուն ներքեւ անյայտ եղան:

« Վառօդին պայթիւնէն համայն
քաղաքին դողդիւնը, երկրաշարժին
ցնցիւնը, փոթորիկին ուժգնութիւնը,
վերջապէս բոլոր աւերիչ զօրութեանց
այսպէս միացումը՝ կրնայ երեւակա-
լիլ թէ ինչ սարսափելի արհաւիրաց
մէջ ձգած էր քաղաքին բնակիչը, և
ոչ ոչ մի միջոց դործած: Ոչ մի տուն,
ոչ մի շէնք, կանգուն կամ անկաւ-
չէ մնացած: Եւրոպայի փողոցներ ա-
ւերակ դարձած են:

Փամփուշտի անտուկ մը գնաց
Տէրփիշներուն թէքքէին մէջ ինկաւ,
և շէնքը նետուելով մէջը գտնուողնե-
րը փլատակներուն ներքեւ թաղեց:

Մեւնուդներուն թիւը ճշդիւ յայտ-
նի չէ: Մինչև հիմա իմացուածն այս
է որ, կըսէ Բուսթի 8/Օրինի մէջ
հրատարակուած նամակ մը. բերդին
պահապան զինուորներէն 150 հոգի
այրած կան, 160 ալ ծանրապէս վի-
րաւորուած: Թաղաքահանէի թաղին
բնակիչներէն ալ 200 այրած և 250
ալ վիրաւորուած կան, և ամեն օր
ջուրերը խեղդուած մանկանց և կա-
նանց դիակներ կը բերեն, որովհե-
տեւ անձրևին յորդուութենէն հաղոր-
դակցութիւններն արգիլուեցան, և
առեւտրէն դուրս փախչողներէն շա-
տեւ հոռանքէն քշուելով խեղդուե-
ցան:

Միւլիթիին հաղիւ կրցաւ փախչե-
լով ինքզինք աղատել իր մէկ փոք-
րիկ դուռին հետ. իսկ կիներն ու իր
ընտանեաց վից անդամներն աւե-
րակներուն ներքեւ մնացին:

Նիւթական միասը մէկ միլիոն լի-
րայէն աւելի կը հաշուեն:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
ԷՍԶԱՄԵՐ ՈՒՄՈՒՄԻԷ
25 Դեկտ. չորեքշաբթի իրիկուն —
26 » հինգշաբթի առաւօտ —
հայտնեցաւ 49 22
կէս օր 49 27

ՊԱՅՄԱՆՔ

Դուրս գացած լրագրաց ճան: Թ
ծախքը խմբագրութեան վրայ է:
Լրագրոյ վերաբերեալ նամակ
կամ որ եւ իցէ գրուի խմբագրի
—Տնօրէնին պիտի ուղղուի, և Պո-
լիս, Չինիլի խան, Մատիսի գրասեն-
եակը:
Ճամբու ծախքը չվճարուած նա-
մակ չընդունուիր:

Կ. Պոլիս 25 Դեկտ.

Սոսիթի Եւրոպայի բաժնիք Սնդղիւր 8 1/4	
« Գոսիտակութեան » 5 30	
Կ. Պոլսոյ Պանքային » 6 1/2	
Քրէտի Եւրոպայի » 11 1/2	
Քրէտի Օսթրիո—Թիւրք » —	
Երկաթուղեաց հիշ » 3ր. 124	
Փոթ. 1863 » 327	
» 1865 » 332	
» 1869 » 279	
» 1872 » 83 1/2	
» 1873 » 265	
Թրամուշ » Օսթ. իր 4	

ԸՆԹԱՑՔ ԳՐԱՄՈՑ

25 ԴԵԿՏԵՄԲԵՐ

Անգլ. լիւր գուրդ » 140 1/4	
Նարուէնի ոսկի » 87 23	
Ինքնալիւ Ռուս » 89 10	
Գրքը փոք » 54 25	
Հինգ ֆրանք » —	
Հինգ ֆրանք » 104 25	
Պղինձ » 129	

ԱԶԳԱՅԻՆ

Յունաց Ս. Պատրիարքը մէկ եր-
կուշաբթի ի վեր հիւանդ ըլլալով
մեր Ամեն Ս. Պատրիարք Հայրն երէկ
Ս. Երուսաղէմայ Պատրիարքական
փոխանորդ Գեր. Սիմէոն Սրբազանին
Գարու քէհեալի Էֆէնտիին, չորս
վարդապետաց և քանի մ'ալ ազ-
գային պաշտօնէից հետ այցելութեան
դնաց Յունաց Ս. Պատրիարքին:

Ֆէնէրի Պատրիարքարանն հասած
ժամանակ, Յունաց Լոգոթիֆէթ Էֆէն-
տին և Սինօդական 12 Արքեպիսկո-
պոսունք ի. Սրբազանութիւնը դիմա-
ւորելով ընդունելութեան մեծ սնն-
եակը տարին, և հոն սուրճ և օշա-
րակ մատուցուեց ետեւ Ս. Պատրիարք
Հայրն յայտնեց թէ ինք Ս. Պատ-
րիարքին հիւանդ ըլլալն իմանա-
լով Եւրոպական հնարհաւորի հետ նոս-
այցելութեան գնացած էր: Ասոր վը-
րայ Ս. Պատրիարք Հայրն Յունաց
Ս. Պատրիարքին պառկած սնեակը
տարին մահճին քով, ուր երկու Ս.
Պատրիարքունք զիրար համբուրե-
լով քառորդի մը շափ տեսակցեցան:

Մեկնելու միջոցին Սինօդական
եպիսկոպոսները Ս. Պատրիարքին
առջեւ ինչալով Պատրիարքական ե-
կեղեցին տարին և հոն Ս. Յօհան Ռա-
կեբեանի Խորհուրդաւորը հրաւեր
ըրին Ս. Պատրիարքին, բայց Ն. Սրբ-
ազանութիւնն առանց բաղմունք
կանգնեցաւ աթոռին առջև, և յու-
նաց եկեղեցականները պարագային
յարմար օրհներգութիւններ կար-
դային: Ս. Պատրիարք Հայրն ալ
օրհնութեան արօթք մը կարգաց
հայերէն լեզուով և խորապարտեան
ողջոյն տուաւ ներկայ գտնուող յոյն
եկեղեցականաց և ժողովուրդոց, և
նոյն հանդիսաւոր ուղեկցութեամբ
եկեղեցիէն դուրս ելնելով, կառքը
նստաւ և Պատրիարքարան վերա-
դարձաւ:

Երբ լսենք թէ Պէշկիթաշի թաղէն բազմաթիւ պատաւար անձինք բողոքողք տուեր են վարչութեան՝ անցեալ չորթու յիշեալ թաղին մէջ կատարուած երեսփոխանական ընտրութեան դէմ, զոր Աղբ. Սահմանադրութեան և վերջին ժամանակներու հրատարակուած վարչական սնորհանութեան հակառակ կը համարեն:

Տիրաւորականութեան մեղ գրուած նամակի մը մէջ հետեւեալները կը կարդանք:

«Ս. Երեսփոխանութեան Արժ. Մարգարիտ վարդապետը որ բարի լինի առաջնորդական տեղապահ զրկուած էր, իւր հայրենիքը իջեցրեալ երեւոյթեալ ժամանակ քաղաքէն ութ ժամ հեռու Գարատաղ բնակած տեղը 10—12 կուտակներէ կողմադուրով եօթնամասուն ութնուն տակի չափ վնաս կրած էր, բայց բարեբաղդարար տեղոյս բարեխնամ կառավարութեան շնորհիւ առաջակները բռնուելով ապրանքը գնահատեալ, և այս օրերս պիտի ուղևորի ի բարիքս:»

«Տեղւոյս առաջնորդական խնդիրն ալ տակաւին չբռնուեցաւ, նոր Պէշեան Գեր. Խորէն եպիսկոպոսը որ տեղոյս առաջնորդ ընտրուած էր, հրաժարական տուաւ իւր վատաբողջութիւնը պարտաւորով. տեսնեմք երբ պիտի լուծուի այս անբաժանելի խնդիրը:»

ԱՄՈՒՐԻԹԻՒՆԻՆ
ԵՒ ՅԱՅՍ

«Ո՛՞՛՛ ԵՒ ԲԱՐԻՒԹ ԲԱՐԻՒԹ ԲԱՐԻՒԹ ԼԻՆԵՆՆ»

Ե.

Մեր այն յօդուածոյն սկիզբը գաղափարեալ Յուսոյ առարկայութեանց է, ն' այնքան այն թէ կուտակներու թիւն մէջ երիտասարդեամբ ծեր ըլլալը կարեւորութիւն չունի, և թէ Հայաստանեայց եկեղեցւոյ կանոնաց հակառակ չէ, նոյն հանդիսին մի և նոյն թուոյն մէջ «Գիտաբութիւն» մը վերնադրով զատ յօդուածի մէջ փաստարանուած է: Այս մասին հերքումն տնօգուտ կը համարուի. վասն զի, ինչպէս կանխաւ ալ ըսինք, կրօնական ժողովոյ ընտրուածաց համար նոր հրատարակած կանոնադրութիւնն երեսուն տարեկանէ վար ձեռնադրութիւն ընելը կարգելու Յուսոյ յօդուածագրոյն կը մնայ այս մասին ուրիշ ժողովոյ հարց հետ փնտրանութեան մասին: Ուստի անցնինք 2. ին որ նոյնպէս «Գիտաբութիւն» մը անուն յօդուածին առարկայութեանց մին և սա է թէ «ամուրի եկեղեցականներն աւելի յոյս կայ աղբին համար քան թէ ամուսնացեալներէն»:

Ներկայ յօդուածոյս մէջ մինչեւ ցարդ ամուսնութեան և կուտակութեան խնդիրն իւր ընդհանուր խնդիր մը ամեն կէտերովը քննուելով և Յուսոյ մէջ բերած գլխաւոր փաստը մի առ մի ցրեցնելը: Այժմ մտնաւորութեմը քիչ մ'ալ խնդիրն և մեր աղբին մէջ ամուրի և ամուսնացեալ կղերականաց իրարմէ ունեցած առաւելութիւնքն և աղբին մատուցած ծառայութիւնքը կշարադատեմք տեսնելու համար թէ ճիշդ է արդեօք Յուսոյ այս առարկայութիւնը թէ՛ «ամուրի եկեղեցականներէն աւելի յոյս կայ աղբին համար»:

Արդարեւ գաղափարի չէ որ յօդուածոյն հեղինակին՝ որ ամուրի եկեղեցականաց գաղափար կը վերաբերի,

այսպիսի գաղափար մը ունենայ իւր գաղափար նկատմամբ. գաղափար մինչեւ ցարդ աղբին ստացած փորձառութիւնն ու իրողութեանց ճշմարտութիւնը բոլորովին իւր առարկայութեան հակառակ կեննեն. տես ինչպէս:

Այսպէս և թէ կայ բան մը որով Հայ եկեղեցին միւս քրիստոնեայ եկեղեցիներէն դեղեցիկ և ուղիղ բարոյականին պահանջածին համեմատաբարութիւն մը ունենայ, այն ալ ամուսնացեալ եկեղեցականաց գրութիւնը շարունակած և պահպանած ըլլալն է: Գաղափարար, ինչպէս Յոյս ալ կը խոստովանի, այս գրութիւնը բոլորովին խանդարեալ փաստի մէջ է այժմ. զի այն ինչ ասէ երեսուն քառասուն տարի յաւաք մէջ քանի կրօնաւորք միայն կը գտնուէին ի Պոլսոյ, այն ալ ոչ թէ թաղերուն մէջ, այլ ի Պատրիարքարան, այս վերջին տարիներս միմիայն Պօլսոյ մէջ գտնուած ամուրի եկեղեցականաց «դուստր» յիշուէն աւելի կեննեն. եկեղեցականք, որոց մեծ մասը քաղաքային կեննեն կը վարեն, ընտանեաց հետ ամենօրեայ յարաբերութիւնը ունին, արանց և կանանց հետ կուտեն և կը խմեն և կրեն թէ կուտակոն են, աշխարհէ հրաժարեալ են, և այլն—Ասանք պարզապէս ինքզինքնին կը խաբեն և ոչ ուրիշը. վասն զի ոչ թէ մեք, այլ նոյն իսկ Շնորհալին է որ սոցա համար «ԱՆՆԱՐԻՆ ԵՒ ԿԵՆՆ», զի սրբութեամբ ծառայեցին: Այս զեզումն այնքան խոր արմատացեալ է մեր կրօնաւորաց մէջ, մինչ զի և թէ այսօր կրօնական իշխանութիւն մը ուղէ ամենք քաղաքներէ հեռացնել, աշխարհէ հեռացնել, ինչպէս որ կը պահանջէ իրենց կոչումը, թողուլ զընտանեկն և զպարտիս, դասն, զհայր և զեղբայր և այլն, չեմք կարծեր թէ և ոչ մէկը զիջանի. և թէ բնութիւն ալ բանեցնել ուղուի, կարի հաւանական է որ չափերն ալ գաղափար ըլլան կամ մեծ խառնութիւն յարաբերան աղբին մէջ:

Բայց տեսնենք թէ ինչ է սոցա (կրօնաւորաց) աղբին մատուցած ծառայութիւնը բողոքատմամբ քահանայից: Եկեղեցւոյ և հօտին գրեթէ բոլոր և ամենամանր պէտքերը ընտանեայց այս վերջիններս են. իրենք ընտանեաց տէր և գաղափար հայր ըլլալով հանգրծ, գիշեր ցերեկ ստիպուած են պատրաստ գրտնաւի ամենամանր պարագայից մէջ իսկ հօտին պէտքն՝ ինչպէս ըսինք լրացունելու: Իմանդամայն ընտանեայ բարոյականին հակելու և ընտանեկան յարկերը վրդովող խառնութիւնները խաղաղութեմ պաշտօնն ունին, և այլն և այլն: Ասկից 'ի զատ, տակաւին տեսնուած են ամուսնացեալ եկեղեցականներ, որք ընդհանուր օգտակարութիւն ունեցող ձեռնարկներ ալ 'ի դուրս հանած են, ինչպէս հեղինակութիւններ ընելով, գարոյներ բանալով և այլն: Եւ եթէ մինչեւ ցարդ քահանայից գաղափարն աւելի այս տեսակ արդիւնքներ յոյս չէ տուած, այս բանս իրին բնութիւնէն չէ, այլ ընդհանրապէս քահանայութիւնն այսօրուան օրս պարտականութիւնները չաւ և փառք սակաւ վիճակ մը գործած ըլլալն և սովորաբար քահանայից ժողովրդեան ստորին և աղէտ մասնն տեսնելն է պատճառը:

Գնենք նաև վարդապետաց մատուցած ծառայութիւնքն, որք միմիայն սա հետեւեալ երկուքն վրայ կը կայանան: Զարդ խօսիլ և ա-

ռաջնորդութիւն ընել: Ասոնց խօսած քարոզները մեծ աշխատութեան մ'արդիւնք չեն. ճարտասանական և տրամաբանական կանոնաց համեմատ կանխաւ պատրաստուած բաներ չեն. այլ շատերը քարոզի եղած ասեմներն, ասանց ոչ սկիզբը և ոչ վերջը մտածելու, ինչ որ այն վայրէջքին յարմար գտնեն կը խօսին: Արդ՝ պարտաւ մնացած գրեթէ բոլոր ժամանակներն ինչո՞վ 'ի զարդին արդեօք Պոլսոյ գտնուող բողոքութիւն կը բռնուի հարք: Ասի հանելուկ մ'է, զոր այլոց կը թողումը լուծել: Գալով առաջնորդութեանց, ս'ըջան լաւագոյն կըլլար արդեօք որ այս քաղաքային—կրօնական փափուկ պաշտօնն արժանաւոր ուսեալ և բանի բուն քահանայից յանձնուէր: Ո՞ր չափ առաջնորդական կրիւներ և զեզումներ պահաւ կըլլային: Այս կէտս կարծեմք արդի Ս. Պատրիարք հայրն ալ լաւ ըմբռնած է, վասն զի կը լինէ թէ արժանաւոր քահանայից առաջնորդութիւն ալ յանձնուլու մտադիր է եղեր:

Ը.

«Լաւ է ամուսնանալ
«քան ըզլեւանալ»

Խնդիրը կարծեմք իւր ունեն կէտերովը բաւական լուսարանեցաւ. այժմ խօսքերնիս ամփոփեմք և խորհրդածութիւն մ'ալ ընելով վերջացնեմք:

Յուսոյ Արժ. յօդուածագրին առարկայութեանց հակառակ, զորս գործոյս սկիզբը մի առ մի յիշեցինք և ապա մի առ մի հերքեցինք, մեր այն խնդրոյն փոյց հանած եղբայրացութիւնքն հետեւեալքն են:

Ա. Ամուսնութիւնը բացարձակապէս հարկաւոր պէտք մ'է մարդ ետակին համար, մանաւանդ որպէսլ հասակի մը մէջ:

Բ. Ամուսնական պէտքը զապէլ կանխաւ յիշած բացառութիւններս չունեցող անձանց համար՝ գրեթէ անկարելի է, և այդ բանը փորձողն իւր թէ՛ բարոյական և թէ՛ ֆիզիքական առողջութեան կը վնասէ:

Գ. Ամուսնութիւնը ամուսնութեանէ աւելի աստուածահաճոյ չէ և չիլնար ըլլալ. վասն զի նախախնայանութեան ծրարքն հակառակ է:

Դ. Ամուսնական կենցաղը մատուցողան կամ հանրօգուտ զբաղմանց արդեւք չկրնար ըլլալ:

Ե. Ամուսնութիւնը բարոյականի կանոնաց մէջ ամենին տեղի չունի:

Զ. Պատանիներէ կրօնաւոր ձեռնարկներն արդիւնք արժանի զեզում մ'է, ինչպէս արդիւնեցաւ ալ:

Է. Ամուսնացեալ եկեղեցականք անհուն աւելի օգտակար են աղբին, քան թէ ամուրիք. ուստի այս վերջիններէն նուազ յոյս կայ քան թէ առաջիններէն:

Ը. Իւր այս ամենուն եղբայրացութիւնք:

Թ. Թէ ամուսնութիւնը ջատագովել և ամուսնութիւնը մեթեք ոչ մարութիւն է, ոչ եղբունադուրծութիւն, ոչ նախախնայանութեան դէմ հայցող և ոչ չեմ գիտեր այլ ինչ ընել է:

Արդ ինչ ընելու եմք կրօնաւոր եկեղեցականաց նկատմամբ, պիտի հարցնենք մի ընթերցողք. յանկարծ և բոլորովին բաւանջ յանալու եմք զանոնք մեր մէջն: Պատասխան իրաւ է որ մեր կրօնաւորաց մեծ մասին արդի վիճակը գոյթակարան է, և Շնորհալին Ս. Հայրն այս վիճակին մէջ և զողաց համար կրնէ թէ Անհաւանք է

որ սրբութեամբ ծառային Աստուծոյ և չլինան. բայց որովհետեւ բոլորովին բաւանջ անկարելի է, ուստի առայժմ մեք հետեւեալ մի քանի պայմանները կառավարելով և ձեռնհաս իշխանութեան ուշադրութեանը կը ներկայացնեմք:

Ա. Ամուրի եկեղեցականաց վիճակն ու վարած կեանքն ուշադրութեան առնուլ. ամոնցմէ կարողներն ստիպել որ պարտաւ ունեցած ամուսնութեան ժամանակին աղբին օգտակար ծառայութիւն մը ընելու նուիրեն. գրական աշխատութիւններ ի յոյս ընծայեն, աղբային պաշտօններ վարեն, և Շնորհալին կրօնաւորաց համար գրած կանոնաց աւելի յարմար կեանք մը անցնելու ջանան:

Բ. Ամուրի եկեղեցականաց բողոքական տրեւումն և ընդհանրապէս կրն ջանան որ տակից ետքը ձեռնարկուելիք քահանայք աւելի ուսեալ և մտաւորական կարողութիւնն ինք զարգացած անձանցմէ առնուին:

Գ. Կարող քահանայից եկեղեցւոյ մէջ քարոզ խօսելու և գաղափար մէջ առաջնորդութիւն ընելու արտօնութիւն տալ:

Այս և ստոր նման միջոցներով քիչ քիչ քահանայութիւնն աւելի արժէք և բարձրութիւն կատանայ, կրօնաւորութեան ճանապարհն ալ նուազ լայն և արձակ դառնալով, բնականաբար այդ վիճակին փափաքողաց թիւը տարօրինակ կերպով կը նուազի, և կուտակութիւնը խիստ հազուագիւտ անձանց բաժինը միայն կըլլայ, ինչպէս որ ժամանակ մ'այնքան բողոքացած կուսանաց վանքերն ալ հետզհետէ նըւազելով՝ հիմա գրեթէ բոլորովին բարձուած են:

Վ. Ի. Պ. Ա. Կ.

Նախնութեանց թուոյն երկրորդ երեսին երրորդ սիւնակին չորրորդ տողին մէջ «Ողջախոհութեամբ առաքինանալու փափաքողաց» խօսքը «Ամուրիութեան փափաքողաց» պիտի ըլլայ:

ՆՈՒ ԳԻՐԻՆԸ

ՀԱՅՐԱՐ ԵՒ ՄԻ ԱՌԱՅԱՒՈՐ ԲԱՆԻ
ԱՅԳԱՅԻՆԻՔ ԵՒ ՕՏԱՐԻ

Ի Գարիբէ Աղբ Եպիսկոպոս Այվազեան
Կ. Պոլս. Տպար. Արամեան 1874.

Ը.

«Հաղար և մի բանք» հաւաքածոյ մի է ժողովրդական կարծ, սիրուն և իմաստասիր առանձնեւոր, որ բողոքական հաւաքչին աշխատութեամբ կոկիւմ, պարզութեմ և մէկ ձևի բերութեմ են:

Թէ ինչ խորհուրդ ունին այս առանձնեւոր, լաւ տաճանութեմ է Գերապատիւ հաւաքչին սա տողերէն: Առաւելոր խօսքերը ամեն ժամանակ և ամեն աղագայ մէջ գործածութեմ են իրեն մէկմէկ բարոյական զինք, պատու փորձաւորութեան և ուղիղ դատաւորութեան, համառօտութեան աստիական իմաստասիրութեան, աղագայ խառն տարբերութեան և զորութեանց: Բողոքային համայնքն եմ և այս գրքին պարտականութիւնը կրնանեմք, Ա. Իւր չափ կամ կէտ ժողովրդեան բաւարարական վիճակին.— Իւր հաւաքածոյ ժողովրդական սովորութեանց,— Գ. Իւր մատենական աղագային կամ նախապատահան օրէններու: Ահա օրինակ առաջնոյն:

1. Հեռու կեցիր դու այն մարդէն
Որ սուրբը պիղծ կանուանէ.
Կը փախչի աղօթքին շառնէն,
Ու քիչը ոչ երբէք կանէ:
(Եր. 47)
2. Խաղաղութիւն ընտանի
Երջանկութեան սկիզբն է.

Պատրիկ Սէրու

Բաժանորդագրեալ դրամադուլ	2,000,000
Ի ճարեալ դրամադուլ	100,000
Պահեստի դրամ հրդեհ	
Հի՛ ձեռքն դրացեալ	250,000—550,000
Գում հասցի 1872ի	270,000